Մտադրությունների հուշագիր

«ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ և «ԷՅՐՎՈՐՔԵՐ» ՍՊԸ միջև
համատեղ հետազոտական աշխատանքներ կատարելու մասին

Հաշվի առնելով ֆունդամենտալ գիտության և կիրառական նշանակության փորձարարական հետազոտությունների բնագավառում համագործակցության զարգացման փոխադարձ շահագրգռվածությունը,

Բարձր գնահատելով ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի կիրառական նշանակության փորձարարական հետազոտությունների վերլուծության մասնագիտական ներուժը,

Կարևորելով ՀՀ ԳԱԱ և մասնավոր հատվածի համագործակցության ակտիվության աստիճանի բարձրացումը,

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները՝

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը և «ԷՅՐՎՈՐՔԵՐ» ՍՊԸ (այսուհետ՝ Կողմերը), իրենց մտադրությունն են արտահայտում համատեղ գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանքներ) կատարելու մասին հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) տեսքով:

Աշխատանքները նպատակաուղղված են լինելու Ինստիտուտի հիմնական գիտական ուղղություններին համապատասխան, ՍՊԸ-ի կողմից առաջ բերված ոլորտային խնդիրների ձևակերպման և հետազոտմանը:

Ուսումնական գործունեություն կիրականացվի ՀՀ ԳԱԱ համակարգում գործող կրթական ծրագրերի շրջանակներում:

Այլ պայմաններ

Կողմերն ինքնուրույն են հոգում իրենց ծախսերը՝ կապված Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների հետ:

Առանձին դեպքերում համագործակցությունը կարող է իրականացվել համատեղ նախագծերի միջոցով, որը կկարգավորվի պայմանագրերով:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրվել է Երևանում 02 օգոստոսի 2024 թ. երկու օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն:

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի կողմից	«ԷՅՐՎՈՐՔԵՐ» ՍՊԸ կողմից
Տնօրենի ժ/պ Լիլիթ Դաշտոյան	Տնօրեն՝ Արամ Հարությունյան